# Անատոլ Ֆրանսի անվան ֆրանսիական դպրոց

Հասցե: Նար-Դոսի 2, 0018 Երևան, Հայաստան
Հեռ: 011 58 36 64
Էլ. հասցե: admin@ecolefrancaise.am
Կայք: www.ecolefrancaise.am

Հարգելի ծնողներ,

Դպրոցի անձնակազմը և ես ուրախ ենք ողջունել ձեր երեխաներին այս նոր 2019/2020 ուսումնական տարվա առիթով:
Ուրախ կլինեմ հանդիպել Ձեզ հինգշաբթի՝ 5 սեպտեմբերի 2019-ին, ժամը 18:00-ին, Սունդուկյանի անվան թատրոնում կայանալիք տեղեկատվական հանդիպման ժամանակ: Այս հանդիպմանը կհաջորդի կոկտեյլ Ֆրանսիայի դեսպանատանը: Հրավեր Ֆրանսիայի դեսպանի կողմից: Ձեր ներկայությունը շատ ցանկալի է:
Այս հանդիպման ընթացքում ես կներկայացնեմ նաև բոլոր ուսուցիչներին և անձնակազմին:
Առիթ կլինի նաև ծանոթացնել Ձեզ հաստատության քաղաքականությանը և նրա մանկավարժական, կրթական և շենքային պայմանների նախագծերին:

Այս նոր ուսումնական տարվա սկիզբը կանցկացվի հատուկ ձևով հետևյալ կերպ՝

Մանկապարտեզի համար (TPS / PS, MS և GS).

Բացառիկ հանդիպում է նախատեսվում միայն TPS / PS- ի աշակերտների ծնողների համար, ուրբաթ՝ 30 օգոստոսի 2019-ին, դպրոցում, ժամը 17:00-ին, քննարկվելու է ուսումնական տարվա հարցերը:

Մանկապարտեզի սաները կսկսեն դասերը երկուշաբթի՝ սեպտեմբերի 2-ին, առավոտյան 9:00-ին: Օրը կավարտվի ժամը 12: 00-ին:
Այդ օրը  չի նախատեսվում երկարօրյա կամ սնունդ:

Երեքշաբթի՝ սեպտեմբերի 3-ին, դասերը կընթանան սովորական ժամերին և երկարօրյան ՝ մինչև 17:00:

Տարրական դպրոցի համար (CP, CE1, CE2, CM1, CM2).

Դպրոցի աշակերտները կսկսեն դասերը երեքշաբթի ՝սեպտեմբերի 3-ին, առավոտյան 9:00-ին:
Օրը կավարտվի ժամը 15: 10-ին: Երկարօրյա ՝ մինչև 17:00:
Չորեքշաբթի՝ սեպտեմբերի 4-ից, դասերը կընթանան սովորական ժամերին:
Տեղեկացնում եմ, որ անհրաժեշտ դպրոցական պարագաների ցանկը դպրոցի կայքում է:

Միջին (6ème, 5ème, 4ème, 3ème) և ավագ դպրոցի, (2nde, 1ère, Tle), Բլեզ Պասկալ բաժնի համար

Դպրոցի աշակերտները կսկսեն դասերը երեքշաբթի ՝սեպտեմբերի 3-ին, առավոտյան 8:00-ին:
Օրը կավարտվի ժամը 15: 10-ին:
Չորեքշաբթի՝ սեպտեմբերի 4-ից, ժամանակացույցները ըստ դասացուցակի:
Անհրաժեշտ դպրոցական պարագաների ցանկը կտրամադրեն համապատասխան ուսուցիչները:
Երկուշաբթի՝ սեպտեմբերի 2-ին, ժամը 18: 00-ին տեղի կունենա Բլեզ Պասկալ բաժնի ծնողների համար կազմակերպված հատուկ հանդիպում:

Տնօրեն՝
Ադել Շեկիր